*Լավությո՛ւն արա, ջուրը գցիր՝ մի օր առջաջդ կգա:*

# ԲԱՐԵԳՈՐԾ

ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ «ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻ՝ ՔԱՇԱԹԱՂԻ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ»

BAREGORTS սեպտեմբեր - դեկտեմբեր 2025, № 3 (67-68), БАРЕГОРЦ

## ՍՆՆԴԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ՝ ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԲԱԶՄԱԶԱՎԱԿ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ

Քանի՜ցս արձանագրել ենք, որ շուրջ երկու տարի սերտորեն համագործակցում են «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամը» (ԳՄՔԲԸՀ) և Կանադայի «Գլոբալ-Մեդիկ» («Global-Medic») մարդասիրական կազմակերպությունը:

Օրեր առաջ դարձյալ Երևան էին ժամանել կանադական այդ կառույցի ներկայացուցիչները. այս անգամ՝ Ստեփան Մյուլերը և Մարկ Չուկրան, ովքեր հիմնադրամի գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի և հոգաբարձության խորհրդի անդամների հետ սննդի օգնություն տրամադրեցին Արցախից բռնի տեղահանված բազմազավակ ըն-



*Շահառուները ստորագրում և ստանում են հերթական օգնությունը*

տանիքներին: Հիմնադրամը, ինչպես հայտնի է, երկար տարիներ աջակցություն էր ցուցաբերում Արցախի տարբեր բնակավայրերում և հատկապես Քաշաթաղի և Շուշիի շրջաններում ապրող բազմազավակ և սոցիալապես անապահով ընտանիքներին:



*Կանադացիների հետ այցելում ենք շահառուներին*

Արդեն երկրորդ տարին է՝ շարունակվում է նրանց աջակցությունը ՀՀ տարբեր մարզերում և Երևանում, որտեղ վերաբնակվել են իրենց պատմական բնօրրանից բռնի տեղահանվելուց հետո:



*Սննդի արկղերի տեսակավորում*

«Գլոբալ-Մեդիկ» կազմակերպության հիշյալ կամավորները մայիսի վերջերին ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի մասնաշենքում, որտեղ գործում է ԳՄՔԲԸՀ-ն, հոգաբարձուների հետ միասին, նախ մասնակցեցին մոտ 20 շահառու ընտանիքներին սննդով աջակցելուն, այնուհետև՝ այցելեցին Հայաստանի տարբեր վայրերում բնակվող արցախցիների:

Հիմնադրամի գործադիր տնօրեն պրոֆ. Գուրգեն Մելիքյանը, հոգաբարձուների խորհրդի նախագահ, պրոֆ. Արծրուն Ավագյանը և հոգաբարձության խորհրդի անդամ, Մարատ Գրիգորյանը կանադացի բարերարների հետ միասին օրերս այցելեցին արդեն հայաստանաբնակ արցախցի շահառուներին:

Առաջին ուղևորությունը կայացավ ՀՀ Կոտայքի մարզի Ձորաղբյուր գյուղ, ուր այժմ բնակվում են Արմեն Վարդանյանը և Արմինե Բաղալյանը: Նրանց ընտանիքը վեց երեխա ունի: Բռնագաղթվել է Քաշաթաղի շրջանի Իշխանաձոր գյուղից, այժմ վարձով բնակվում է Ձորաղբյուրում: ՀՀ-ում բռնագաղթվածներից առաջինն է, որ հիմնադրամի կողմից ստացել է կով:



*Վարդանյան-Բաղալյան ընտանիքը ստացավ իրենց կովը*

Այցելության հաջորդ նշանակետը Նոր Խարբերդն էր, որտեղ իր երեք երեխաների հետ վերաբնակվել է Արցախի Մարտունու շրջանի Մաճկալաշենի բնակչուհի Նուբար Դանիելյանը:



*Նուբար Դանիելյանի ընտանիքում*

Նրա ամուսինը հերոսաբար զոհվել է 2023 թ. սեպտեմբերի 23-ին հայրենի գյուղը պաշտպանելիս: 2020 թ. պատերազմում էլ նահատակվել էին Նուբարի եղբայրները:

Համագործակից բարերարների մյուս այցելավայրը Արմավիրի մարզի Էջմիածնի տարածաշրջանի Շահումյան գյուղն էր, ուր բնակվում է Քրիստինե Ամյանի ընտանիքը՝ 12 երեխաներով: Բարերարները նրանց ևս հատկացրին նախատեսված աջակցությունը:



*Ամյան Քրիստինեի ընտանիքում*

Օրվա ընթացքում բարերարները հիմնադրամի գործադիր տնօրենի և հոգաբարձուների խորհրդի անդամների ուղեկցությամբ այցելեցին Մայր աթոռ Սբ. Էջմիածին և Զվարթնոցի տաճար, ծանոթացան հայոց եկեղեցու պատմությանը, վաղ միջնադարյան եկեղեցաշինական ճարտարապետությանը:

Զոհրաբ ԸՌՔՈՅԱՆ

## “Global Medic” Organization is here with us.

The journey ahead may be arduous, but with unwavering dedication and the support of partners like GlobalMedic we will continue to make a tangible difference in the lives of those who need it most.



*From left to right: Tony Kahve foundation’s board member, “Global Medic” volunteers Ed Gan & Anthony Ijzerman*



*From left to right: Ofik Arakelyan, displaced from Ishkhanadzor, Artsakh, volunteers Ed Gan & Anthony Ijzerman, foundation’s exec. director Gurgen Melikyan, Ofik’s daughter.*



*“Global Medic”volunteers with Gurgen Melikyan and Karen Blbulyan, displaced from Kashatagh with 8 children*



*"Global Medic" volunteers Kathleen Sullivan & Denise Noguchi with board members of the foundation and War Veteran.*

Our dear friends-volunteers from “Global Medic Edward Gan and Anthony Ijzerman, Kathleen Sullivan and Denise Noguchi, Tyler Noble (staff) and Don Jorgensen made their mission visits to Yerevan in August and September and early October. It was Kathleen’s second visit to Armenia on a same mission. Her first visit took place on Global Medic’s inaugural mission. Food hampers distributions were handled in



*From left to right: Board Member, Stella Mehrabyan, “Global Medic” volunteers Kathleen and Denise with Kristine Khachatryan displaced from Kashatagh with 5 children.*

the Yerevan State University along with the Foundation’s board members.



*From left to right: Displaced Yervand Grigoryan, board member Bagrat Nazarian (London), Lilit Grigoryan, (wife of Yervand with 5 children) Global Medic volunteer Don Jorgensen, foundation’s exec.director Gurgen Melikyan, Global Medic staff member Tyler Noble*

Also, Armenian manufactured canned products, other food supplies and clothing were provided on Foundation's behalf.

Global Medic team members also visited displaced families who live in the countryside.



*Tyler Noble and Don Jorgensen with Rosa Tsatryan -6 children and Foundation's exec. director Gurgen Melikyan*

We extend our deepest gratitude to Rahul Singh, Global Medic's Executive Director, for making this wonderful mission a monthly reality and for providing care, love, and compassion to those who need it most.



*Visiting family of Christine Amyan- 12 children*

---

## Խոշոր եղջերավոր անասունների (ԽԵԱ) ծրագիրը շարունակվում է

Ավելի քան 25 տարի հիմնադրամն իրականացրել է տարբեր ծրագրեր, այդ թվում՝ խոշոր եղջերավոր անասունների ծրագիրը, և այս շրջանակներում 554 կով է տրամադրվել շահառուներին Արցախում:

2023 թվականին մեր հայրենակիցները բռնի տեղահանվեցին Արցախից և վերաբնակեցվեցին Հայաստանի տարբեր մարզերում:



*Ամյան Քրիստինեի 12 հոգանոց ընտանիքին կովը նվիրաբերել է «Գլոբալ Մեդիկ»-ի կամավոր Անթոնի Այզերմանը*

Հիմնադրամը շարունակում է աջակցել իր շահառուներին և վերսկսել է խոշոր եղջերավոր անասունների ծրագիրը: Ավելի քան 10 ընտանիք արդեն ստացել է կով:

Մենք շնորհակալ ենք այն աջակիցներին, ովքեր նվիրված են մնում հիմնադրամի գործին:

Հատկապես շնորհակալ ենք Global Medic կազմակերպության կամավոր Էնթոնի Այզերմանին, ով վերջերս Հայաստան կատարած իր այցի ժամանակ կով նվիրաբերեց 12 երեխա ունեցող Քրիստինե Ամյանի ընտանիքին: Ահա մարդասիրության մեծ օրինակ:

Եկեք աջակցենք մեր բռնի տեղահանված արցախցիներին՝ ընտանիքներին տրամադրելով այս խիստ անհրաժեշտ օգնությունը:



*Աճեմյան Լուսինեի և Գալուստյան Յակոբի ընտանիքն ունի 5 երեխա, Կովը նվիրաբերվել է Վանեցյան ընտանիքի կողմից*



Արևիկ Գրիգորյանի և Էռնեստ Խոսրովյանի ընտանիքը ունի 9 երեխա: Կովը նվիրաբերվել է Վանեցյան ընտանիքի կողմից:



Հերմինե և Վահան Դարագուլյանի ընտանիքն ունի 5 երեխա: Կովը նվիրաբերվել է Վանեցյան ընտանիքի կողմից:



Մանուկյան Կարինեի և Գրիգորի ընտանիքն ունի 9 երեխա: Կովը նվիրաբերվել է Դայանա Պարսամի կողմից



Գալոյան Մարինեի ընտանիքն ունի 5 երեխա: Կովը նվիրաբերվել է Գևորգ Վանեցյանի կողմից



Իշխանյան Լենայի և Գրիգորյան Նորայրի ընտանիքն ունի 5 երեխա: Կովը նվիրաբերվել է Վանեցյան ընտանիքի կողմից



Սարգսյան Լաուրայի և Բլբուլյան Կարենի ընտանիքն ունի 8 երեխա: Կովը նվիրաբերվել է Սերժ և Աիդա Բաղալյան ընտանիքի կողմից

## Do you know what our friends think about us?

.

**Edward Gan is a Global Medic volunteer** who recently visited Armenia on a mission. We are thrilled to share his feedback about the Foundation. I was touched by the personal connection that Gur-



*Edward Gan and Gurgen Melikyan discussing plans*

gen and other members of the “Gurgen Melikyan multichildren family foundation of Kashatagh” had with the people they were helping. Although providing aid such as the Global Medic food hampers, canned food and clothing was very important, it was even more important for the people to know someone cared. It appeared to give them hope, even in hard circumstances. Gurgen, Mary and the foundation members knew every person and their story. The foundation does more than just provide food aid, it runs an amazing program of providing cows to familes for long term sustainability. It also provides scholorships for students of displaced families giving people a chance for a better future.It was a very personal and memorable experience for me to hand out the aid from Global Medic and the foundation to the families. To see their smiles, especialy those of the children was priceless. The biggest impression I am left with, is how the founder Gurgen Melikyan is so passionate about the cause. He is the driving force of the organization and is an inspiration to us all. He is a modern day hero and meeting him has changed me and inspired me to do more. A great organization with great people doing great work. I was proud to be part of it for a short time.

**Laura Garrioch, a staff member of Global Medic**, a lot of my work takes place in the office so I often find it rewarding when I get to participate in



*Laura Garrioch with the displaced children*

distributions and connect with the people we are supporting. Working with the “Gurgen Melikyan Multichildren Family Foundation of Kashatagh” was a particularly rewarding experience. Although it was heartbreaking to see the amount of children forced from their homes and in need of assistance, it was truly inspirational to see the passion, dedication and love that Gurgen, his family, and the Foundation's volunteers have for helping these families, ensuring they have food on the table, and ensuring they build a community that takes care of one another.

**Kathleen Sullivan is a volunteer with Global Medic**




*From left to right: Kathleen, Foundation's exec. director Gurgen Melikyan, beneficiary Nubar Danielyan*

"The Gurgen Melikyan Multichildren Family Foundation of Kashatagh" represents the "GOLD STANDARD" of philanthropic work. As a volunteer with Global Medic based in Toronto, Canada, it has been my privilege to join forces with Gurgen's foundation; one of our local partners on the ground in Armenia, to help the many families who have been displaced from the Artsakh region.

Gurgen, along with Mary, his daughter and the key organizer, and their very active and devoted board members, set a bar for compassion, caring and service to their community that is both inspiring and humbling to see in action.

The difference they make through their well thought-out and highly organized endeavors no doubt goes well beyond achieving the immediate needs they serve, ensuring that all those they help know that they are cared for, respected and supported.

Theirs' should be the template for all those looking to make a lasting, positive impact on those they are wishing to serve.

**Kellan Shields is a volunteer with Global Medic**

Our team was privileged to join the foundation in providing much needed food to displaced families from Artsakh. Having these families welcome us into their homes was a truly humbling experience.

**Julie Colgan is a volunteer with Global Medic**

It is a pleasure to collaborate alongside your foundation! I hope these food hampers & every day staple items can make life a little easier for displaced families during such difficult times. These families welcomed us, from Canada with open arms & such hospitality; It was truly an emotional experience for me; something I will never forget.



*Board members with Kellan and Julie visit the family of Vartanian with 6 children*

**ՑՈՒՑԱԿ**

## 2025-2026թթ. անվանական կրթաթոշակ ստացողների

| Ստացող | Նպատակ | Գումար |
|---|---|---|
| ԵՊՀ հիմնադրամ | Դավիթ և Նազելի Չարչյանների անվան կրթաթոշակ, Մարգարյան Մարիամ, ֆարմացիա մագիստր 1-ին կուրս | 30000 |
| ԵՊՀ հիմնադրամ | Նազելի Չարչյանի անվան կրթաթոշակ, Կիրակոսյան Արեն, քիմիա 3-րդ կուրս | 30000 |
| ԵՊՀ հիմնադրամ | Խորեն Պալյանի անվան կրթաթոշակ, Մեսրոպյան Նորա, հայ բանասիր. 4-րդ կուրս | 30000 |
| ԵՊՀ հիմնադրամ | Ստեփան Ալաջաջյանի անվան կրթաթոշակ, Ծատրյան Լարիսա, հայ բանասիր 3-րդ կուրս | 30000 |
| Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիա | Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Մաթևոսյան Թամարա, դասական երգ 2-րդ կուրս | 10000 |
| Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջ | Լուսինե Զաքարյանի անվան կթաթոշակ, Գրիգորյան Վարուժան, 3-րդ կուրս | 10000 |
| Ռոմանոս Մելիքյանի անվան երաժշտական քոլեջ | Լուսինե Զաքարյանի անվան կթաթոշակ, Աբգարյան Վաչագան, 3-րդ կուրս | 10000 |
| Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական քոլեջ | Լուսինե Զաքարյանի անվան կթաթոշակ, Պետրոսյան Դավիթ, դասական երգ 3-րդ կուրս | 10000 |
| Շառլ Ազնավուրի անվան երաժշտական քոլեջ | Լուսինե Զաքարյանի անվան կթաթոշակ, Նահապետյան Միքայել, երգեցողություն 3-րդ կուրս | 10000 |
| Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական քոլեջ | Լուսինե Զաքարյանի անվան կրթաթոշակ, Ամարյան Լիա | 10000 |

**Ընդամենը՝ 180000 դրամ**

## 2025-2026թթ Վճարված ՈՒսման վարձեր (առաջին կիսամյակ)

| Հ/հ | Ամսաթիվ | ԲՈՒՀ | Նպատակ | Գումար |
|---|---|---|---|---|
| 1 | 22/09/25 | Երևանի Կոմիտասի անվ պետ կոնսերվատորիա | Ամալյան Արման, ժող.երգեցողություն, մագիստր. 1-ին կուրս /բացառ./ | 300000 |
| 2 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Միրաքյան Կարեն, իրավագիտություն 3-րդ կուրս/բացառ./ | 200000 |
| 3 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Գալոյան Սահակ, ԵԼՀ արտասահման.գրակ, մագիստր. 1-ին կուրս /բացառ./ | 200000 |
| 4 | 01/10/25 | Արևմտյան Ուկրաինայի ազգ.համ. Երևանի ԿԳԻ | Թորոսյան Սառա, ֆինանս, բանկ.գործ և ապահովագր. 3-րդ կուրս հեռակա | 100000 |
| 5 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Սնջոյան Լիլի, ԵԼՀ անգլ-ֆրանս. 2-րդ կուրս/բացառ./ | 200000 |
| 6 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Վարդանյան Զարուհի, թյուրքագիտ. 3-րդ կուրս | 100000 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 7 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Միրզոյան Աշոտ, թյուրքագիտ. 3-րդ կուրս | 150000 |
| 8 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Ավետիսյան Անի, ԻԿՄ 4-րդ կուրս /բացառ./ | 300000 |
| 9 | 01/10/25 | ՃՇՀԱՀ հիմնադրամ | Անտոնյան Նոնա, դիզայն Դ-31-1 խումբ | 100000 |
| 10 | 01/10/25 | Երևանի ինֆորմատիկայի պետ. քոլեջ | Ոսկանյան Հայկ, վեբ.դիզայն 3-րդ կուրս /բացառ./ | 200000 |
| 11 | 01/10/25 | ՀՊՏՀ հիմնադրամ | Գևորգյան Սոնա, ֆինանսներ 4-րդ կուրս հեռակա | 100000 |
| 12 | 01/10/25 | ՃՇՀԱՀ հիմնադրամ | Խաչատրյան Վիկտորյա, դիզայն Դ-31-1 խումբ | 100000 |
| 13 | 01/10/25 | Մեհրաբյանի անվ բժշկ քոլեջ | Շեկյան Սրբուհի, քույրական գործ 3-րդ կուրս /բացառ./ | 100000 |
| 14 | 01/10/25 | Հերացու անվան ԵՊԲՀ | Մնացականյան Բելլա, ընդհ.բժշկություն 4-րդ կուրս | 150000 |
| 15 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Մանուկյան Սյուզաննա, ԵԼՀ անգլ-իտալ. 2-րդ կուրս | 100000 |
| 16 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Երանոսյան Մանե, ԵԼՀ 5-րդ կուրս | 150000 |
| 17 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Թամոյան Գյուլփերի, դեղագործություն և քիմիա 3-րդ կուրս /բացառ./ | 200000 |
| 18 | 01/10/25 | ՀՊՏՀ հիմնադրամ | Նուրբեկյան Ինեսա, մարքեթինգի և բիզնեսի կառավարման ֆակ 2-րդ կուրս | 100000 |
| 19 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Խաչատրյան Մարիամ, հայ բանասիր. 3-րդ կուրս | 150000 |
| 20 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Թադևոսյան Էլենա, միջազգ.հարաբ. 3-րդ կուրս | 150000 |
| 21 | 01/10/25 | Հերացու անվան ԵՊԲՀ | Սիմոնյան Սարկիս, ատամնաբուժ. 5-րդ կուրս | 120000 |
| 22 | 01.10.2025 | Հայկական բժշկական ինստիտուտ | Աջամօղլյան Հայկազ, ստոմատոլոգիա 4-րդ կուրս, Ջավախք /բացառ./ | 100000 |
| 23 | 01/10/25 | Հայկական բժշկական ինստիտուտ | Մարաբյան Անյա, բուժ.ֆակ. 2-րդ կուրս, Ջավախք /բացառ./ | 100000 |
| 24 | 01/10/25 | Մ.Խորենացու անվան համալսարան | Մկոյան Ալբերտ, կիրառ.մաթեմ և ինֆորմատիկա 3-րդ կուրս, Ջավախք /բացառ./ | 100000 |
| 25 | 01/10/25 | ՀՊՏՀ հիմնադրամ | Օգանեսյան Կարինե, մարքեթինգ 2-րդ կուրս, Ջավախք | 100000 |
| 26 | 01/10/25 | Հայկական բժշկական ինստիտուտ | Դեմուրչյան Պարույր, ստոմատոլոգիա 4-րդ կուրս, Ջավախք /բացառ./ | 100000 |
| 27 | 01/10/25 | ԵՊՀ հիմնադրամ | Մկոյան Համսիկ, հոգեբան.մագիստր. 2-րդ կուրս /Ջավախք/ | 100000 |
| 28 | 01/10/25 | Վ.Բրյուսովի անվան համալսարան | Ղազարյան Մարինա, թարգմանչական գործ, 3-րդ կուրս | 100000 |
| 29 | 01/10/25 | Վ.Բրյուսովի անվան համալսարան | Խաչատրյան Մարի, զբոսաշրջություն 2-րդ կուրս | 100000 |
| 30 | 01/10/25 | ՀՖԿՍՊԻ հիմնադրամ | Սիմոնյան Ակոպ, կինեզոլոգիա 4-րդ կուրս | 120000 |
| 31 | 01/10/25 | Հայաստանի Եվրոպական համալսարան | Սարգսյան Ալեքս, միջազգային հարաբ. 2-րդ կուրս | 100000 |
| 32 | 01/10/25 | Հայաստանի Եվրոպական համալսարան | Վերդյան Լիլի, շուկայագիտություն 1-ին կուրս | 100000 |

**Ընդամենը՝** **4,390,000 դրամ** **$11,552.63**

## ԵՊՀ ֆակուլտետներից ստացված ֆինանսական օգնությունը հիմնադրամին

| Ամսաթիվ | Ուղարկող | Նպատակ | Գումար |
|---|---|---|---|
| 10/06/25 | Իրավագիտության ֆակ. | Օգնություն | 317 000 |
| 13/06/25 | Աշխարհ. և երկրաբ. Ֆակ., Ս. Քելյան | Օգնություն | 240 000 |
| 23/06/25 | Պետրոսյան Դավիթ | Օգնություն | 20 000 |
| 30/06/25 | ԵԼՀ ակադեմիկոս Սեդա Գասպարյան | Օգնություն | 50 000 |
| 07/07/25 | Քիմիայի ֆակ. Ս. Ղոչիկյան | Օգնություն | 205 000 |
| 08/07/25 | Ֆարմացիայի ինստիտուտ | Օգնություն | 85 000 |
| 08/07/25 | Տնտես. և կառավարման ֆակ | Օգնություն | 175 000 |
| 15/07/25 | Իրանագիտ. և թյուրքագիտ. Ամբիոն, Ռ. Մելքոնյան | Օգնություն | 220 000 |
| 01/09/25 | Բանասիրության ֆակուլտետ /Եղիազարյան Վարդան / | Օգնություն | 35 000 |
| 24/09/25 | Մանկավարժության և կրթության զարգացման կենտրոն /Հարությունյան Նազիկ/ | Օգնություն | 100000 |
| 16/10/2025 | Ռուս բանասիրության ֆակուլտետ | Օգնություն | 40000 |
| | **Ընդամենը՝** | | **1 487 000** |

## ԱՅԼ ՕԳՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Ամսաթիվ | Ուղարկող | Նպատակ | Գումար | Համարժեք |
|---|---|---|---|---|
| 05/06/25 | Վանեցյան Արմեն Ռոբերտի | Բարեգործություն | 3 800 000 | 10 000 USD |
| 03/07/25 | Հովհաննիսյան Վոլոդյա | Օգնություն | 120 000 | |
| 07/07/25 | Վանեցյան Արմեն Ռոբերտի | Բարեգործություն | 3 800 000 | 10 000 USD |
| 18/07/25 | Հովհաննիսյան Վոլոդյա | Օգնություն | 60 000 | |
| 18/07/25 | Nikolas Akgulian | Student tuition | 1 143 000 | 3 000 USD |
| 21/07/25 | Սիլվա, Ռաֆֆի,Լենա,Յովան Կարապետյաններ | Օգնություն | 76 200 | 200 USD |
| 24/07/25 | Թեքեյան Կենտրոն հիմնադրամ | Նվիրատվություն -Բագրատ Նազարյան-Լոնդոն | 3 767 828 | |
| 31/07/25 | Antony Ijzerman and Sue Sibley | Cow project | 381 000 | 1 000 USD |
| 04/08/25 | Վանեցյան Արմեն Ռոբերտի | Բարեգործություն | 3 800 000 | 10 000 USD |
| 14/08/25 | Հովհաննիսյան Վոլոդյա | Օգնություն | 60 000 | |
| 22/08/25 | Վահրամ Փիրջանեան | Նվիրատվություն | 120000 | |
| 27/08/25 | Մելիքյան Գուրգեն | Օգնություն ծառերի ծրագիր՝ Հովհաննես Ջիբյանի հիշատակին՝ ի փոխ. ծաղկեպսակի 20/06/25թ. | 20000 | |
| 05.09.2025 | Ավագյան Արծրուն | Օգնություն մեղրի ծրագիր | 25000 | |
| 12.09.2025 | Սերժ և Արդա Բաղալյաններ | Օգնություն | 380000 | 1000 USD |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 14.09.2025 | Վանեցյան Արմեն Ռոբերտի | Բարեգործություն | 3 800 000 | 10 000 USD |
| 22.09.2025 | Սահակյան Վարուժան | Օգնություն գրքերի ծրագիր | 100000 | |
| 22.09.2025 | Toni Kahve | Օգնություն գրքերի ծրագիր | 400000 | |
| 25.09.2025 | Քոչարյան Ժիրայր | Օգնություն գրքերի ծրագիր | 22100 | 50 EUR |
| 02.10.2025 | Շմավոր Շմավոնյան | Օգնություն մեղրի ծրագիր | 15000 | |

**Ընդամենը՝** **21890128դրամ** **45200USD+50Eur**

## ԽԵԼ ԾՐԱԳԻՐ

**Հիմնադրամի այս ծրագրով կով տրամադրվել է Արցախից բռնագաղթված հետևյալ բազմազավակ ընտանիքներին՝**

| Ամսաթիվ | Ազգանուն, Անուն | Բնակության վայր | Երեխա | ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 18/07/25 | Մանվելյան Շահանե | Բերձոր/Էջմիածին | 7 | 300000 |
| 01/08/25 | Թովմասյան Ժենյա/Օրդուբեկյան Սամվել | Բերձոր/Գետաշեն | 6 | 330000 |
| 01/08/25 | Ամյան Քրիստինե | Բերձոր/Շահումյան | 12 | 330000 |
| 06/08/25 | Սարգսյան Լաուրա/Բլբուլյան Կարեն | Բերձոր/Ջրառատ | 8 | 330000 |
| 11/08/25 | Մանուկյան Կարինե/Մանուկյան Գրիգոր | Բերձոր/Զույգաղբյուր | 9 | 330000 |
| 15/08/25 | Բաբայան Մարգարիտ/Բաբայան Սերոբ | Բերձոր/Մրգավետ | 5 | 330000 |
| 13/08/25 | Ծատրյան Ռոզա/Մուխաելյան Մասիս | Բերձոր/Զորավան | 5 | 330000 |
| 27/08/25 | Խեչումյան Մերի/Խեչումյան Արթուր | Միրիկ/Վերին Դվին | 9 | 330000 |

## «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» Կողմից հրատարակված գրքերը /01.10.2023թ- 01.01.2025թ/

| Հեղինակ | Վերնագիր |
|---|---|
| Մ. Բաղդասարյան | «Աղետ» |
| Հ. Շիրազ | «Անտիպ էջեր |
| Կ. Առաքելյան | «Ձայն Հայրենյաց» |
| Վ. Մնացականյան | «Դիմանկարների և մտորումների խաչմերուկ» |
| Մ. Աճեմյան | «Սերունդները հետնորդներին» |
| Գ. Մելիքյան,Վ. Ոսկանյան, Ա. Տոնոյան | Շիրվան և հարակից տարածքներ հոդվածների ժող. |
| Ս. Ղազարյան | «Ջրերի կանչը» |
| Ա.Ավագյան | «Արմտանի մեծ ընկուզենին» Հակոբ Մնձուրի |
| Ք. Նաջարյան | «Կանչ հայրենի տնից» |
| Վ. Բալայան | «Արցախ» |
| Ա. Հակոբջանյան, | «Հայոց Աղվանից աշխարհ» |

### Fundraising cycling tour for Artsakh People by Khoren Mardoyan and Raffy Demirdjian

Fundraising cycling tour from Toronto to Niagara fall was successfully completed on September 6th and a total of $25000 CAD was raised. The initiative, titled "From real estate to real aid with vision in motion" aimed to deliver immediate, tangible support to vulnerable communities in Armenia, particularly families forcibly displaced from Artsakh and now rebuilding their lives in unfamiliar surroundings. $5000 CAD from the total amount will be allocated to "Gurgen Melikyan Multichildren Family Foundation of Kashatagh", specifically for the purchase of cows to support forcibly displaced families from Artsakh. A heartfelt thank you to my friend Rahul Singh, Executive Director of Global Medic, Canada and the entire Global Medic team for your dedication, help and unconditional support to the people of Armenia, especially our brothers and sisters from Artsakh. Your compassion, commitment and tireless efforts to stand with our community mean so much to us. Your solidarity gives strength to this mission. From the bottom of my heart thank you for everything Rahul and thank you Global Medic Canada. Global Medic's "Right Aid to the Right People at the Right time" ethos made an ideal partner for this mission. With a history of responding to crises in the South Caucasus, Global Medic has provided over 8000 food hampers and 1280 emergency kits to displaced families from Artsakh in recent years.




*Mardoyan and Galstanian families*

Mardoyan's enduring commitment to Armenia, combined with the generous support of the Toronto Armenian community and Canadian humanitarian partners has once again shown that diaspora-led grassroots action can make a real difference.




*End of the Successful tour*

## Բարությունը երբեք շատ չի լինում

Այս խոսքերը լավագույնս բնութագրում են՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»–ի գործադիր տնօրեն պարոն՝ Գուրգեն Մելիքյանին, ով արդեն երկրորդ անգամ իր անմնացորդ սերն ու նվիրումն է



փոխանցում՝ «Հույսի կամուրջ» ՀԿ Նոյեմբերյանի մասնաճյուղի սաներին, երբեք չմոռանալով այն, ինչպես ինքն է մշտապես ասում. «ծագուկներին», որոնց գոնե մեկ անգամ տեսել կամ ձեռք է մեկնել: Այս անգամ, սաներին նվիրաբերելով՝ թվով երկու «Հայրենիք» անվանումը կրող հայրենաճանաչողական խաղ, նախատեսված, բոլոր տարիքի հայերի համար:

Ինչ խոսք՝ անքննարկելի է, որ յուրաքանչյուրս պետք է սիրենք, գնահատենք և մեր բաժին չափով պատասխանատվություն կրենք մեր Հայրենիքի ամեն մասնիկի համար, իսկ սիրելու համար նախ պետք է լավ ճանաչենք այն: Հենց այդ նպատակով՝ մեզ մոտ իրականացվող երկշաբաթյա ամառային ճամբարի ընթացքում, այսօր երեխաների հետ խաղացինք այդ խաղը, որի ընթացքում՝ մասնավորապես շեշտադրեցինք մեր՝ Տավուշի մարզի մասին տեղեկատվական քարտերի իմացությունը:Երեխաները մեծ հետաքրքրությամբ կարդացին, ստացան մանրամասն տեղեկատվություն, արեցին նոր բացահայտումներ Տավուշի իրենց համայնքների մասին:

ՀԳ.Այդպիսին է Պարոն Մելիքյանը, անհատնում, չսպառվող, այլև մշտապես ավելացող բարությունն իր մեջ կրող ու սփռող Հայ, ում մասին ես ու քույրս՝ Սյուզաննան, մշտապես ենք խոսում, ամեն տեղ ու ամենքի հետ բնորոշելով նրան որպես ՍԵՐ ՍԵՐՄԱՆՈՂ Ու ՍԵՐ ՍՓՌՈՂ ՀԱՅԻ, ում ճանաչելն ինքնին եջանկություն ու մեծ ուժ է մշտապես բոլոր ժամանակներում, բայց հատկապե՛ս հիմա, այսօր, մեր օրերում..

## Աղաբաբյան քույրերի նամակը

Օրեր առաջ նորից այցելել էինք՝ պրն Գուրգեն Մելիքյանին, ով մեզ հետ զրույցում ասաց.

– Որ նորից գրքեր տամ, կտանե՞ք ձեր գյուղի գրադարանների համար, ինչին ի պատասխան՝ ես ու քույրս միաբերան ասացինք.

– Միանշանակ կտանենք, Դուք միայն ասեք: Ձեր ցանկացած խոսք մեզ համար օրենք է, որին մշտապես ականջալուր ենք մենք և կատարելու պատրաստ:

Լսելով մեր պատասխանը և զգալով պատասխանատվությունն ու կարևորությունը մեզ համար՝ իրեն բնորոշ լռությամբ, գոհունակ ժպիտով սկսեց հատիկ առ հատիկ, անուն առ անուն դասավորել տրվելիք գրքերը: Ամենայն մանրամասնությամբ ճշտելով, թե արդյո՞ք նախորդ անգամ տվել և մեր միջոցով գրադարաններին է փոխանցել այս կամ այն գիրքը:

Բարության, հայրենիքը ոչ միայն խոսքով, այլև գործով սիրելու ևս մի դրսևորում, այս անգամ գրքերով լի կապոցի տեսքով, որը երեկ փոխանցեցինք՝ «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» գործադիր տնօրեն Գուրգեն Մելիքյանի կողմից Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքի




*Գրքերը հասան հասցեատերերին*

սահմանամերձ մեր Կողբ համայնքի, մշակույթի կենտրոնի ներքո գտնվող երկու գրադարաններին, մշակույթի տան տնօրեն պրն. Սասուն Մուրադյանին և գրադարանավար՝ տիկին Գայանե Քոչարյանին, ովքեր վերստին հայտնեցին իրենց խորազգաց շնորհակալությունը, արդեն ավանդույթի ուժ ստացած օժանդակության և ուշադրության համար:

## ԲԵՐՁՈՐՅԻ ՊԱՏԱՆԻ՝ ՄԵՆՈՒԱ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ

2022 թ. «Բարեգործ» թերթի 55-րդ համարում անդրադարձել էինք 14 տարեկան Մենուա Հակոբյանի հաղթանակի մասին ՀՀ մշակութային մայրաքաղաքում կայացած հեղինակավոր «Գյումրի OPEN» միջազգային շախմատային մրցաշարում: Նա մինչև 18 տարեկանների խմբում գրավեց պատվավոր առաջին տեղը: Այդ առթիվ ոսկե մեդալի հետ միասին նա պարգևատրվեց նաև ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի պատվոգրով:



*Մենուայի հետ 3 տարի առաջ*

Երեք տարի անց, ս.թ. օգոստոսի 9-17-ը Վրաստանի Փոթի քաղաքում կայացավ «18th Poti International Chess Festival Nana Aleksandria Cup - 2025» շախմատի միջազգային փառատոնը:

Փառատոնին բարձր ցուցանիշներ գրանցեց Տիգրան Պետրոսյանի անվան շախմատի տունմարզադպրոցի սան Մենուա Հակոբյանը (մարզիչ՝ Դավիթ Կարաթորոսյան):

Մենուան վաստակեց 6.5 միավոր և, կիսելով 3-4-րդ հորիզոնականները, զբաղեցրեց 4-րդ տեղը:

Վրաստանի 2 մրցաշարերի արդյունքում Մենուայի միջազգային վարկանիշը բարձրացրել է 200-ից ավել կետով:

ՖԻԴԵ-ն 17-ամյա շախմատիստ Մենուա Հակոբյանին շնորհել է ՖԻԴԵ-ի վարպետի կոչում: Մենուայի ներկայիս վարկանիշը կազմում է 2387 կետ:

Ջերմորեն շնորհավորելով բերձորցի պատանի շախմատիստի փայլուն հաղթանակը՝ հիմնադրամի գործադիր տնօրենը բնութագրական խոսքերով



*Մենուա Հակոբյանը, մեր հպարտությունը*

արժևորեց Մենուայի հաջողությունը, ամուր կամքն ու նպատակասլացությունը՝ նույնը մաղթելով բոլոր հայորդիներին ու մանավանդ արցախցիներին:

Միջազգային մրցաշարում հաղթած պատանի հայ շախմատիստին՝ Արցախի Բերձորի ծնունդ մեր հերոսին հիմնադրամի հոգաբարձության խորհուրդն արժանացրեց 100 հազար դրամական պարգևի՝ որպես խրախուսանք գալիք հաղթանակների ճանապարհին:

Շնորհավորում ենք Մենուային՝ մաղթելով նոր ձեռքբերումներ և հաջողություններ:



FIDE
GENS UNA SUMUS
INTERNATIONAL CHESS FEDERATION

FIDE is pleased to confirm herewith that

**Hakobyan, Menua**

FIDE ID: 13313274

**Armenia**

has obtained the title of

**FIDE Master**

in the year 2025

Arkady Dvorkovich
FIDE President

## Շ Ն Ո Ր Հ Ա Կ Ա Լ Ա Գ Ր Ե Ր, Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

Տեղի ունեցավ «ՀԵՆՔ» Համազգային Բարեգործական Հիմնադրամի «Ակադեմիական» ծրագրի մեկնարկի և տարեկան վկայագրերի հանձնման հանդիսավոր արարողությունը:

Արարողությունը անցկացվեց ՀՀ Սահմանադրության օրվա շրջանակներում: ՀԵՆՔ-ի անդամները ՀՀ և Հիմնադրամի դրոշներով երթ կազմակերպեցին՝ հարգանքի տուրք մատուցելու մեր հերոսներին:

2021 թվականից ի վեր ՀԵՆՔ-ը ապահովում է ՏՏ ոլորտի բարձրակարգ կրթություն՝ վիրավոր և հաշմանդամ զինծառայողների, զոհված զինվորների ընտանիքների, գործող սպաների և տաղանդաշատ երիտասարդների համար:

Առաջին անգամ հնչեց ՀԵՆՔ-ի օրհներգը՝ Գոռ Մելքումյանի խոսքերով, որը արտացոլում է հիմնադրամի հիմնարար արժեքները:

Հանդես եկան վաստակավոր արտիստներ Աննա Մայիլյանը (ՄԱՅԻԼՅԱՆ ԵՌՅԱԿ և Դավիթ Ամալյանը): Արարողությունը ավարտվեց «ՀԵՆՔ»-ի և «Զատիկ» ԵԱԿ սաների Թամզարա պարով:

Միջոցառման ժամանակ Շնորհակալագրով պարգևատրվեց նաև պրոֆ. Գուրգեն Մելիքյանը՝ հիմնադրամի գործունեությանը ցուցաբերած անշահախնդիր աջակցության և նվիրվածության համար:

Շնորհակալ ենք բոլորին, ովքեր կանգնած են մեր հայրենանվեր առաքելության կողքին:


«ՀԵՆՔ»
ՀԱՄԱԶԳԱՅԻՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐ

Երախտագիտությամբ և ճանաչումով տրվում է

ԳՈՒՐԳԵՆ ՄԵԼԻՔՅԱՆԻՆ

«ՀԵՆՔ» Համազգային Բարեգործական Հիմնադրամի գործունեությանը ցուցաբերած անշահախնդիր աջակցության և նվիրվածության համար:
Ձեր՝ մեր կողքին լինելը մեզ ուժ է տալիս՝ շարունակելու մեր առաքելությունը հանուն արժանապատիվ ապագայի:

ԱՐՄԵՆ ԲԱՅՐԱՄՅԱՆ
«ՀԵՆՔ» ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԱԽԱԳԱՀ

05.07.2025
ԱՄՍԱԹԻՎ

### ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան խոշորացված համայնքի սահմանամերձ Կողբ գյուղի ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳԻՐԸ

Հարգելի՛ պրն. Մելիքյան, սույն նամակով մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամ»-ին Կողբ գյուղի երկու գրադարաններին հայրենաճանաչողական գրականության նվիրաբերելու համար, ինչպես նաև՝ Աղաբաբյան քույրերին, որոնց շնորհիվ իրականացվել է գրքերի փոխանցման գործընթացը:

Կողբ համայնքի ղեկավար՝
Արարատ Թամազյան
Ստորագրություն Կնիք
Կից ներկայացված է ստացված գրքերի ցուցակը:
Ամսաթիվ՝ 20.06.2025

«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» կողմից տրամադրված գրքերի ցուցակը.

1. Չուքասզյան Բաբկեն-Երկերի ժողովածու
2 Կոստիկյան Ք.Պ./խմբ/ Մատենադարանի պարսկերեն վավերագրերը հայոց պատմության սկզբնաղբյուր
3. Մուրադյան Սամվել-Գրական Հանգրվաններ
4. Բունիաթյան Արցախ-Արյունոտ օրեր
5. Սիմոնյան Հրաչիկ-Անդրանիկի ժամանակը-2 օրինակ
6. Բագրատ Ձիվանի-Երգեր ու մտքեր
7. Խաչերեան Լ.Գ. << Աբեղեանականների Պաշտպանական Մարտավարութիւնը եւ նրանց Թիւրիմացութիւնները Գրաբանական Տեսության Հարցերում>>.
8. Հակոբջանյան Արտաշես Հայոց Աղվանից աշխարհի գլխիվայր շրջված պատմությունը-2 օրինակ
9. Խաչերեան Լ.Գ. Հայոց ազգային դիցարանը
10. Ավագյան Արծրուն -Արմտանի մեծ ընկուզենին
11. Թահմազ Խաչատուր-Համշենի բարբառը Ձենիկի խոսվածքը
12. Ալոյան Լենդրուշ- *Հայ հասարակական միտքը "Մշակ" լրագրում*
13. Կյուրեղյան Երվանդ-Իմ հուշերի ճանապարհով
14. Պապոյան Արտաշես-Հայագիտական հետազոտություններ
15. Ալաջաջյան Ստեփան-Չափածո վերք-4 օրինակ
16. Քոհեն Ռոզմարի Հարությունյան-Վերապրած խոյեցի Արուսյակը
17. Սարգսյան Դավիթ Մկո-Առաջնորդը Ալֆան և Օմեգան
18. Դիլանյան Սամվել-Հին ու նոր հավատալիքներ
19. Մարտիկյան Գոհար-Ապրելու բանաձև
20. Մալեքյան Լինա-Հայ-իրանական պատմամշակութային
21. Մանուկյան Խաչիկ -Անմահականս
22. Խուլան Ձ. Լինց- ժողովրդավարությանն անցնելու *և* ժողովրդավարության կայացման խնդիրները
23. Ալաջաջյան Ստեփան, Եղեգները չխոնարհվեցին

Հիմնադրամի սիրելի բարեկամներ, ստորև ներկայացված մեր հիմնադրամի արտարժույթային և ՀՀ դրամի բանկային տվյալներով կկարողանաք օգտակար լինել հիմնադրամի շահառուներին, որոնք բռնագաղթվել են Արցախից:

**GMMCFF, 501 W. Glenoaks Blvd., #104, Glendale, CA 91202**

ԿԱՄ՝
Beneficiary Bank: Ardshinbank, CJSC, street G. Lusavorich 13, Yerevan, Armenia
SWIFT code ASHBAM22
Beneficiary : G. Melikian found of the family of multichild of the Kashatagh
EUR 2475704668770010
USD 2475704668770020
ARM 2475704668770000
Corr Bank.
USD CITIBANK NA NEW YORK SWIFT: CITIUS33 ACC36209105
EUR COMMERZBANK SWIFT : AG DRESDEFF ACC 499/0800065700/888
RUR SBERBANK ROSSII; Moscow Swift: SABRRUMM 012
БИК: 044525225 К/С 30101810400000000225
ACC:30111810600000000435

## «ԲԱՐԵԳՈՐԾ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ, ԵՊՀ ՊՐՈՖ. ՍԱՄՎԵԼ ՊԱՐԳԵՎԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ՝ «ՅՈՀԱՆ ՎՈԼՖԳԱՆԳ ՖՈՆ ԳՅՈԹԵ» (Johann Wolfgang von Goethe) ՊԱՏՎԱՎՈՐ ՄՐՑԱՆԱԿԻ ԴԱՓՆԵԿԻՐ ԵՎ ՄԵԴԱԼԱԿԻՐ

Ս/թ հունիսի սկզբին Գորիսում, երբ Երևանի և տեղի մտավորականության հանդիպմանը ԵՊՀ պրոֆ. Սամվել Մուրադյանն ավարտեց Գուսան Աշոտին ներկայացնող իր բովանդակալից զեկուցումը, բոլորի համար անակընկալ՝ պատմամշակութային ժառանգության՝ երաժշտության, գրականության, արվեստի և թատրոնի որակաչափության, այդ թվում՝ Ցեղասպանության հետևանքների վնասի վերականգնման ու հատուցման փորձագետ, Բարձրագույն որակավորման հանձնաժողովի և Մոսկվայի պետական համալսարանի «Աուդիտ», Հայաստանի ԳԱԱ «Armenian Economic Journal», «Քաղաքակրթության գործընկերություն» ամսագրերի խմբագրական հանձնախմբերի անդամ, «Բյուզանդական ժառանգություն» ամսագրի գլխավոր խմբագիր, տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, տնտեսագիտության գծով 2020 – 2023 թթ. Նոբելյան մրցանակի հավակնորդ Մարտիկ Յուրիկի ԳԱՍՊԱՐՅԱՆԸ հանդիպման մասնակիցներին տեղեկացրեց, որ Եվրոպայի ԳԱ՝ գիտության, գրականության, բանասիրության, արվեստի և մշակույթի գործիչներից կազմված հանձնաժողովը պրոֆեսոր ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ս/թ մայիսի 19-ին արժանացրել է գերմանացի մեծ բանաստեղծ, դրամատուրգ, վիպասան, մըտածող՝ գիտնական, թատերական ռեժիսոր և քննադատ, պետական այրի անվան «Յոհան Վոլֆգանգ ֆոն Գյոթե» Պատվավոր մրցանակի դափնեկրի:

Գորիսում պարգևը հանրայնացրեց և արժևորեց ՀԳԱԱ փոխնախագահ ակադ. Յու. Մ. Սուվարյանը: «Գյոթեի Մեդալը,– ասաց նա,– 1955 թվից ամեն տարի EAEN-ի կողմից շնորհվում է ոչ գերմանական ծագում ունեցող անձանց. գերմանացիներին այն շնորհվում է միայն բացառիկ դեպքերում: Որպես Մեդալի հավակնորդ-թեկնածու՝ պրոֆ. Ս. Մուրադյանն առաջադրվել է Գյոթեի ինստիտուտից՝ Միջազգային մշակութային ժառանգության հիմնադրամի անունից՝ աշխարհի տարբեր երկրների դիվանագիտական առաքելությունների հետ սերտ համագործակցությամբ:

Ամիսներ անց՝ սեպտեմբերի 25-ին, ԵՊՀ-ում կայացավ եվրոպական բարձր պարգևը պրոֆ. Ս. Մուրադյանին հանձնման արարողությունը: ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի պրոֆեսոր, նույն ամբիոնի պատվավոր վարիչ Սամվել Մուրադյանին մրցանակի № 08110 վկայագիրը և Գյոթեի մեդալը շնորհվեցին ձեռամբ ԵՊՀ ռեկտոր Հովհաննես Հովհաննիսյանի: Շնորհավորելով մեդալակրին՝ նա մաղթեց շարունակական բեղուն գործունեություն:

– Հաշվի առնելով գերմանացիների ճշտապահությունն ու բծախնդրությունը,– ընդգծեց պրն. ռեկտորը, – կարող ենք պատկերացում կազմել, թե որքան կարևոր են մրցանակի № 08110 վկայագիրն ու այս մեդալը: – Այն Ձեզ շնորհվեց գիտական, գրական նշանակալի ներդրման համար, որը նպաստում է նաև եվրոպական մշակույթի տարածմանը: – Հանովերի Գյոթեի անվան ինստիտուտը, որն առաջադրել է պրոֆ. Ս. Մուրադյանի թեկնածությունը, տարիներ շարունակ Հայաստանում կարևոր գործունեություն է ծավալում գերմանական մշակույթի, լեզվի տարածման և միջմշակութային հաղորդակցության գործում: Այսօր ԵՊՀ-ն սերտորեն համագործակցում է թե՛ Գյոթեի ինստիտուտի, թե՛ Հայաստանում Գերմանիայի դեսպանատան և թե՛ գիտակրթական գործունեություն ծավալող գերմանական հիմնադրամների հետ: Սիրելի՛ պրոֆեսոր, սա նշանակում է, որ Ձեր գիտական ու գրական մեծարժեք ճանապարհին արժանացավ միջազգային ճանաչման: Սա միայն անձնական հաղթանակ չէ, նաև ԵՊՀ-ի հաղթանակն է, որովհետև Ձեր կերպարով է աշխարհը ճանաչում նաև համալսարանն ու հայ գիտությունը: Այս պարգևը Ձեր անցած ուղու, Ձեր աշխատանքի ու նվիրումի գնահատանքն է՝ ի նշան այն գիտելիքի, որը Դուք սերմանել եք տասնյակ սերունդների մեջ: Վստահ եմ՝ Ձեր օրինակով մեր ուսանողները կսովորեն ամենակարևորը՝ լինել հավատարիմ իրենց առաքելությանը և երբեք չդավաճանել գիտության ու մշակույթի ազգային արժեքներին: Երևանի պետական համալսարանի ողջ համայնքի անունից մեկ անգամ ևս շնորհավորում եմ և հայտնում մեր

երախտագիտությունը՝ վստահ լինելով, որ Ձեր կենսագրության ամեն մի նոր էջ շարունակելու է հարստացնել ԵՊՀ պատմությունը: Ձեր նվաճումը մեր բոլորի հաղթանակն է: Մենք հպարտ ենք Ձեզանով:

ԵՊՀ ռեկտոր պրն. Հ. Հովհաննիսյանը փաստեց, որ Հայաստանի կրթական համակարգը դեռևս խորհրդային ժամանակաշրջանից առաջ էլ կապված է եղել գերմանական գիտակրթական համակարգին: Գերմանացի հայագետները՝ Լայստը, Շրյոդերը, Հյուբշմանը, Յոզեֆ Մարկվարտը (որ հպարտությամբ Հովսեփ Բդեշխյան էր ստորագրում), Գելցերը, Կարստը, Վինդիշմանը, Պետերմանը, Նոյմանը, այսօր էլ՝ Տեսա Հոֆմանը, կարևոր ներդրում ունեն արևելագիտության ու մասնավորաբար հայագիտության մեջ: Էլ չենք խոսում Գյոթեի, Հայնեի, Շիլլերի մեծ գրականության մասին, որով հարստացել է հայ գեղարվեստական ու գրական միտքը: Այդ ավանդույթը շարունակվում է առ այսօր: «Մեր հայտնի հայագետները, հոգևորականներն ու երևելիները,– շարունակեց նա,– հատկապես 19-րդ վերջերից ու 20-րդ դարասկզբից իրենց կրթությունը ստացել են Գերմանիայում: Միայն Աբեղյանն ու Շանթը բավական են հիմնավորելու համար:

Ահա ականատես ենք հայ-գերմանական գիտամշակութային համագործակցության նոր իրողության: Երևան հասավ նաև Գյոթեի Մեդալը, որը Երևանի պետական համալսարանում, ձեր ներկայությամբ, շնորհավորելով հանձնում ենք պրոֆ. Սամվել Մուրադյանին՝ որպես նրա գիտամանկավարժական ծանրակշիռ վաստակի արդար գնահատական:

Պրոֆ. Ս. Մուրադյանին շնորհավորեցին և բնութագրական խոսք ասացին ԵՊՀ գիտական քարտուղար բ. գ. թ. Մ. Հովհաննիսյանը, պրոֆ. Գ. Մելիքյանը, հայ բանասիրության ֆակուլտետի դեկան դոց Ա. Գալստյանը, ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության և գրականության տեսության ամբիոնի վարիչ պրոֆ. Ալ. Մակարյանը, նույն ամբիոնի դոց. Ա. Ջրբաշյանը,

Պրոֆ. Ս. Մուրադյանն իր երախտագիտության խոսքում շնորհակալություն հայտնելով ԵՊՀ-ին՝ ասաց. «Ես համալսարանում ստացել եմ ամեն ինչ, միշտ պարծեցել եմ համալսարանով և իմ սիրելի ուսուցիչներով՝ Մկրյանով, Թամրազյանով, Ջրբաշյանով, Աղայանով, Ջահուկյանով ու մյուսներով: Ցանկացել եմ ներդրում ունենալ ի նպաստ համալսարանի թե՛ համալսարանում սովորող սերունդների դաստիարակության, թե՛ Մայր բուհի հեղինակության բարձրացման և թե՛ գրականագիտական մտքի զարգացման տեսանկյուններից՝ միևնույն ժամանակ խոստանալով շարունակաբար նպաստել համալսարանի հեղինակության բարձրացմանը»:

**Նարա ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**



*Նկար հիշատակի*

,

## ԱՐԱՐԱՏԸ, ՄԵՐ ԲԻԲԼԻԱԿԱՆ ԼԵՌԸ

Հատված Շմավոն Շմավոնյանի «Արարատ» պատկերազարդ գրքից



*Շմավոն Շմավոնյանի "Արարատ"-ը*



Եվ թող քառասուն Արարատներն այս,
Խոսեն բարբառեն քառասուն լեզվով
Հեռավոր պանդուխտ մեր զավակներին,
Որ դառնան ամենքի, ամենքի համար
Հրավեր Հայրենյաց,
Կոչ Արդարության
Եվ ստուգություն՝ գալիք հաղթության
*Կաթողիկոս Ամենայն Հայոց, Վազգեն Ա*

И пусть эти сорок Араратов
Вещают в сорок языков
К детям наших в дальных далях
Призывом в дом родной пусть станут
Для всех, для каждого из них
Воззванием к правде
К победам верным, что грядут
*Католикос Всех Армян Вазген I*

And may these forty Ararats
In forty languages speak and have their say
To our pilgrim children in the faraway
And may their voice become
For each and all of them
An invitation from their homeland
A call for justice, Accelerative of victory and peace.
*Catholicos of All Armenians, Vazgen I*

***«Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ հիմնադրամի հոգաբարձության խորհրդի կազմը հաստատված 2025թ. Փետրվարի 3-ին***

***Հիմնադրամի գործադիր տնօրեն*** - Մելիքյան Գուրգեն, ԵՊՀ արևելագիտ. ֆակ. պրոֆ., Հայաստան
***Հոգաբարձ. խորհրդի նախագահ*** - Ավագյան Արծրուն, ԵՊՀ հայ բան. ֆակ. դեկան, պրոֆ., Հայաստան
***Նախագահի տեղակալ*** - Մելիքյան Մերի, Հայաստան

***Խորհրդի անդամներ***

1. Սաֆարյան Ալեքսանդր - ԵՊՀ, պրոֆեսոր, թյուրքագիտ. ամբիոնի վարիչ, Հայաստան
2. Մուրադյան Սամվել - ԵՊՀ, բան.գիտ.դոկտոր, պրոֆ., հայ գրակ. ամբիոնի պատվավոր վարիչ, Հայաստան
3. Հարությունյան Սվետլանա -ԵՊՀ, արևելագիտության ֆակուլտետի դեկանի տեղակալ, Հայաստան
4. Միրզոյան Քնարիկ – ԵՊՀ, թյուրքագիտ. ամբ. դոցենտ, Հայաստան
5. Գրիգորյան Մարատ -ԵՊՀ, աշխարհագրութ. և երկրաբան. ֆակ. դեկան, Հայաստան
6. Սեփանյան Սուրեն - ԵՊՀ դասախոս, «Ապառաժ» ակումբի հիմնադիր-նախագահ Հայաստան
7. Շմավոնյան Շմավոն-ՀՀ վաստակավոր նկարիչ, Հայաստան
8. Պողոսյան Աշոտ - ԵՊՀ, Հայաստան
9. Քեթիպեան Արա - գրող, հասարակական գործիչ, Հայաստան
10. Վարդանյան Գուրգեն -գործարար, բարերար, Հայաստան
11. Ազիզյան Սոֆի -հիմնադրամի հաշվապահ, Հայաստան
12. Կուշերյան Կատյա -բարերար, ժուռնալիստ, Հայաստան
13. Մեհրաբյան Ստելլա -հասարակական գործիչ, Հայաստան
14. Վարդանյան Արմոնդ - լիազոր ներկայացուցիչ, բարերար, գործարար, ԱՄՆ
15. Ալեքսանդրյան Իրինա, ԱՄՆ
16.Փափայանց Շիլա, բարերար, ԱՄՆ
17. Քանյան Մերի, բարերար, ԱՄՆ
18. Բաշմակյան Հակոբ-հասարակական գործիչ, բարերար, ԱՄՆ
19. Ալաջաջյան Թերեզա-բարերար, ԱՄՆ
20. Ալադադյան, Վահան-բժիշկ, բարերար, ԱՄՆ
21. Մարտին, Ջարեh-բարերար, ԱՄՆ
22. Կաիվե Թոնի Շուքրի-բարերար, Անգլիա
23. Նազարյան Բագրատ-բարերար, Անգլիա
24. Մահտեսի - Հակոբյանց Ռուբեն-գործարար, Գերմանիա
25. Վանեցյան Կարեն-գործարար, բարերար, Շվեյցարիա
26. Շահնազարյան Հենրիկ-բժիշկ, բարերար, Շվեդիա
27. Բորոյան Ռաֆիկ-բժիշկ, բարերար, Շվեդիա

**ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ՝**
**ՍԱՄՎԵԼ ՄՈՒՐԱԴՅԱՆ.**
Բան, գիտ. դոկտոր, պրոֆեսոր
**ԽՄԲԱԳՐԱԿԱԶՄ՝**
Ավագյան Ա., բ.գ.դ, պրոֆեսոր
Մելիքյան Գ., բ.գ.թ., պրոֆեսոր
Սաֆարյան Ալ., պ.գ.թ., պրոֆեսոր
Անգլերեն նյութերի դասակարգումը՝
Հոգաբարձության խորհրդի անդամ՝
**Մերի Մելիքյանի**

Համարի շարվածքը, ձևավորումը՝
Ս. Մուրադյանի,
Լուսանկարները՝ **Զ. Ըռքոյանի**:
Տպաքանակը՝ 99:
Թերթը բաժանվում է անվճար:
**Խմբագրության հասցեն՝**
Երևան-0025, Աբովյան 52 Ա, հայ բանասիրության ֆակուլտետի մասնաշենք, 212 սենյակ, Հեռ.: 060710617; 055-522936; 010-552537